Ժիրիկ Ռեվազյանը, Գայանե Գաբոյանը, Անուշ Ռևազյանը և Ասյա Ռևազյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 01-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-092-0118-0025 և 06-092-0118-0019 կադաստրային ծածկագրերով,3.355 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Ժիրիկ Ռեվազյանի, Գայանե Գաբոյանի, Անուշ Ռևազյանի և Ասյա Ռևազյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 361.730 (երեք հարյու վաթսունմեկ հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ

դրամ,որից 242.684 ( երկու հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր ութսունչորս ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 98.298 (իննսունութ հազար երկու հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2023 թվականների համար կազմում է 62.336 (վաթսուներկու հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ:

2024 թվականի ապրիլի 01-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի ապրիլի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Ժիրիկ Ռեվազյանը, Գայանե Գաբոյանը, Անուշ Ռևազյանը և Ասյա Ռևազյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 09.03.2024) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Ժիրիկ Ռեվազյանի, Գայանե Գաբոյանը, Անուշ Ռևազյանի և Ասյա Ռևազյանի բացակայությամբ):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրեսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Ժիրիկ Ռեվազյանից, Գայանե Գաբոյանից, Անուշ Ռևազյանից և Ասյա Ռևազյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 424.066 (չորս հարյուր քսանչորս հազար վաթսունվեց) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

361.730 (երեք հարյու վաթսունմեկ հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որպես 06-092-0118-0025 և 06-092-0118-0019 կադաստրային ծածկագրերով,3.355 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 242.684 ( երկու հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր ութսունչորս ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 98.298 (իննսունինութ հազար երկու հարյուր իննսունինութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

62.336 (վաթսուներկու հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 01.04.2024 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275100023 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275001981 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 15

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 404-Ա

## ՌՈԲԵՐՏ ՔԵՐՈԲԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿՑԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՈՀԱՆՈՑԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Ռոբերտ Քերոբի Հարությունյանի դիմումը (մուտք՝ 12/04/2024-ի. ՄՀ-70-24)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռոբերտ Քերոբի Հարությունյանին տալ բնակելի տան կցակառուցման, ավտոտնակի, ամառային խոհանոցի և պարիսպի կառուցման նախագծման թույլտվություն:

2. Ռոբերտ Քերոբի Հարությունյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 16

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 ապրիլի 2024 թվականի N 405-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՓԻՆԵ ԴԱԼԱԼՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արփինե Դալալյան»-ի 2024 թվականի ապրիլի 15-ի N 72-24 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Լեռնահովիտ, 5-րդ փողոց, թիվ 6/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արփինե Դալալյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 16

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 406-Ա

## « «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ «ԳՈՒՅՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ» » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2024 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 14:30-ին անցկացնել « «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան գյուղի «Գույների աշխարհ» » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 16

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 407-Ա

### ՎԻԳԵՆ ՎԱԶԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՑԱՏԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Վիգեն Վազգենի Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 16/04/2024-ի. ՄՀ-73-24)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վիգեն Վազգենի Գրիգորյանին տալ հացատան կառուցման նախագծման թույլտվություն:

2. Վիգեն Վազգենի Գրիգորյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 16

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2024 թվականի N 408-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՄԱՐԻԱՄ ՍՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՄԱՆԵ ՍՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻ ՍՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ, ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍԻ «ՍԱԲԻՆԵ» ՓՈՔՐ ԽՄԲՈՎ ՏՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 110-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավորության 2006 թվականի հունիսի 22-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 962-Ն որոշումով, հիմք ընդունելով Տաշիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 12.04.2024-ի N1 արձանագրությունը և այն, որ անչափահաս երեխաների ծնողներ Ռիմմա Մինասյանը և Սոս Սարգսյանը խուսափում են երեխաների դաստիարակությունից և նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեղվահովիտ, 1-ին փողոց, տուն 18 հասցեի բնակիչներ, անչափահաս երեխաներ Մարիամ Սոսի Սարգսյանին, (ծնվ.14.08.2008թ), Մանե Սոսի Սարգսյանին (ծնվ.08.07.2010թ.) և Մարի Սոսի Սարգսյանին (ծնվ.26.04.2012թ.) վերցնել սկզբնական հաշվառման ՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

2.Անչափահաս երեխաներ՝ Մարիամ Սոսի Սարգսյանին, Մանե Սոսի Սարգսյանին և Մարի Սոսի Սարգսյանին տեղափոխել Հայկական Կարիտասի «Սաբինե» փոքր խմբով տուն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 16

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 409-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 29-ի «ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք քաղաք Տաշիր Կիրովի փողոց, թիվ 349 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին» N72-Ա որոշման 1-ին կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1.Ճշտել 06-008-0254-0021 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը և սահմանայիրն չափերը համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի և ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կիրովի փողոց, թիվ 349 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0254-0021) սեփականության իրավունքով պատկանող Սաշա Սերգեյի Մաթևոսյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,1183738 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 106,6քմ մակերեսով շինությունը համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

1) Տնտեսական շինություն՝ 106,6 քմ»

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 17

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 410-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1377966 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին դիմումը.(մուտք՝ 11.04.2024թ.-ի թիվ ՔԴ-412-24, ՔԴ-413-24 )

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-100-0123-0014 կադաստրային ծածկագրով 0,193 հա վարելահող:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 17

ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 411-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1377978 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին դիմումը.(մուտք՝ 11.04.2024թ.-ի Թիվ ՔԴ-412-24, ՔԴ-413-24 )

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-100-0201-0611 կադաստրային ծածկագրով 0,338 հա խոտհարք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացրող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 17

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան. 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 412-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի․ Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական 1377967 տրված 31.08.2004թ) հրաժարվելու մասին դիմումը.(մուտք՝ 11.04.2024թ.-ի Թիվ ՔԴ-412-24, ՔԴ-413-24 )

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Թերեզա Այվազի և Ռիտա Արտաշի Մարդոյաններին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.

1) 06-100-0144-0012 կադաստրային ծածկագրով 0,53 հա խոտհարք:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 17

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 413-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-074-0032-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՄԱՌԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Պետրոսի Նարգիզյանի (անձնագիր՝ AS0504526 տրված 15.02.2019թ.) դիմումը (մուտք՝ 17/04/2024-ին, ՔԴ-353-24), 16.04.2024 թ. N՝ 16042024-06-0155 կասեցման որոշումը, ըստ օրենքի իրավունքի ժառանգության (գրանցամատյաններ՝ 3027, 3029) վկայագրերը, 24.12.2001թ. տրված թիվ 578238 վկայականը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար հատկացված 0,185325հա /ճշտված մակերեսով/ հողամասը և 1960թթ-ին կառուցված մառանը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճշտել 06-074-0032-0016 կադաստրային ծածկագրով հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Անդրանիկ Պետրոսի, Գայանե Անդրասի, Կարեն Անդրանիկի և Պետրոս Անդրանիկի Նարգիզյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0032-0016 կադաստրային ծածկագրում գտնվող 0,185325 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և 23,50 քմ. մառանի նկատմամբ

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 17

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2024 թվականի N 414-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 1229-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի «ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր Երևանյան փողոց, թիվ 199 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին » N1229-Ա որոշման 1-ին կետը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«1.Ճշտել 06-008-0117-0013 կադաստրային ծածկագրով հողամասի մակերեսը և սահմանայիրն չափերը համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի և ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 199 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0117-0013) սեփականության իրավունքով պատկանող Արմեն Աղասինի Ռաֆայելյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,084558 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 79,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

1) ծածկ՝ 41,9 քմ
2) բաղնիք՝ 19 քմ
3) սանհանգույց՝ 1 քմ
4) հարթակ 17,7 քմ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 17

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 415-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-074-0019-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Թամարա Մարկոսի Բասենցյանի (անձնագիր՝ AL0554020, տրված 21.12.2023թ.) դիմումը (մուտք՝ 08/04/2024-ին, ՔԴ-398-24), Տաշիրի համայնքապետարանի կողմից 07 մարտի 2024 թվականին տրված քաղվածքը, ըստ օրենքի իրավունքի ժառանգության (գրանցամատյան՝ 946) վկայագիրը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,148426 հա բնակելի կառուցապատման հողամասը և 1961թ-ին կառուցված բնակելի նշանակության շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրենքի ուժով ճանաչել Թամարա Մարկոսի Բասենցյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0019-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 0,148426 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Թամարա Մարկոսի Բասենցյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0019-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 0,148426 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող շինության նկատմամբ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 416-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան 06-074-0019-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Վարդանանց փողոց, 10 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2112) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06999NGE6A6U:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 417-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-077-0004-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վալյա Սուրենի Դալլաքյանի (նույնականացման քարտ՝ 013611421, տրված 18.05.2022թ.) դիմումը (մուտք՝ 09/04/2024-ին, ՔԴ-403-24), ըստ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի փետրվարի 28-ի գործ թիվ ԼԴ3/0077/02/23 քաղաքացիական գործով վճիռը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով և 8-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,338416 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Օրենքի ուժով ճանաչել Վալյա Սուրենի Դալլաքյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա 06-077-0004-0021 կադաստրային ծածկագրում գտնվող 0,338416 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 418-Ա

## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վալյա Սուրենի Դալլաքյանի (նույնականացման քարտ՝ 013611421, տրված 18.05.2022թ.) դիմումը (մուտք՝ 09/04/2024-ին, ՔԴ-403-24), ըստ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի փետրվարի 28-ի գործ թիվ ԼԴ3/0075/02/23 քաղաքացիական գործով վճիռը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N 867 որոշումով հաստատված կարգի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Տաշիր համայնքի, գյուղ Միխայլովկա վարչական սահմաններում գտնվող 06-077-0111-0031 կադաստրային ծածկագրով 1,987845 հա վարելահողի, 06-077-0170-0003 կադաստրային ծածկագրով 0,875859 հա խոտհարքի, 06-077-0148-0002 կադաստրային ծածկագրով 0,161221 հա մակերեսով խոտհարքի հողհատկացման հիմքերը:

2. Ճանաչել Վալյա Սուրենի Դալլաքյանի սեփականության իրավունքը Տաշիր համայնքի, գյուղ Միխայլովկա վարչական սահմաններում գտնվող հետևյալ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի հողհատկացման հիմքերը:
1) 1,987845 հա մակերեսով վարելահող (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0111-0031 )
2) 0,875859 հա մակերեսով խոտհարք (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0170-0003 )
3) 0,161221 հա մակերեսով խոտհարք (կադաստրային ծածկագիր՝ 06-077-0148-0002 )

3.Հողամասերի սահմանային չափերը որոշվում են «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ապրիլի 2024 թվականի N 419-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա 06-077-0004-0021 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Միխայլովկա, 1-ին փողոց, 118 հողամաս (փոստային դասիչ՝ 2113) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06999WHLBYEB:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2024 թվականի  N 420-Ա

## ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի հավելված 1-ի 8.4 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-14 համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝
1) Արտաշես Ադլոյան-Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Իրինա Մարտիրոսյան - Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3) Նորայր Բաղդասարյան Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4) Համեստ Շահբազյան -Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5) Գուրգեն Ջավուկցյան- ավագանու անդամ,
6) Ռիմա Բարոյան-ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 421-Ա

## ՀԱՄԱՅՆԱՔՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N55-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի հմմայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների անձնագրերը՝ համաձայն NN1-7 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 23-ի «Համայնքային ծառայության պաշտոնները հաստատելու մասին» N55-Ա որոշման NN1-7 հավելվածները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 18

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2024 թվականի N 422-Ա

## ԵՐԵՄՅԱՆ ՓԱՐՄ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, «Երեմյան ֆարմ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Էդիկի Երեմյանի դիմումը (մուտք՝ 18/04/2024-ի ՏԴ-14-24)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Երեմյան ֆարմ» փակ բաժնետիրական ընկերությանը տալ 30-300 սպանդային միավոր սպանդանոցի կառուցման լրամշակման շինարարության թույլտվություն:

2. «Երեմյան ֆարմ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024թ. ապրիլի 19

ք.Տաշիր